Վիրահայոց թեմում միշտ էլ մեծ ոգևորությամբ և սիրով է նշվում Սուրբ Սարգիս զորավարի, նրա Մարտիրոս որդու և 14 զինակիցների հիշատակության օրը: Տոնը շարժական է, այս տարի այն նշվեց հունվարի 27-ին, իսկ ոգևորությունը նկատելի էր արդեն նախատոնակի ժամանակ: Սբ Սարգսի տոնը բացառիկ եկեղեցական տոներից է, որը տասնյակ հազարավոր ոչ միայն հայ, այլև այլազգի երիտասարդների համախմբում է հայոց եկեղեցու շուրջը: Այդպես էր նաև այս տարի:

2018 թվականի հունվարի 26-ին, ուրբաթ օրը, հավատարիմ մնալով ավանդույթի ուժ ստացած քայլերթին, թբիլիսահայ երիտասարդությունը հավաքվեց Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում: Հավարտ երեկոյան ժամերգության, ուխտավորների թափորը եկեղեցու հոգևոր հայրեր Տեր Վիրապ քահանա Ղազարյանի և Տեր Մանուկ քահանա Ձեյնալյանի առաջնորդությամբ, սարկավագաց դասի մասնակցությամբ, Սուրբ Սարգսի սրբապատկերով և ճանաչված նկարիչ Սուսաննա Մկրտչյանի կողմից եկեղեցուն նվիրած տոնի հրաշալի խաչվառով, ուղղվեց դեպի մայրաքաղաքի Խարփուխ թաղամասում գտնվող 1883 թվականի կառույց հինավուրց Սուրբ Սարգիս մատուռը:

Քայլերթի ճանապարհին թափորը կանգ առավ և պահպանության աղերսով աղոթք բարձրացրեց Շամքորեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցու փլատակների մոտ և այնուհետև շարունակեց երթը:Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու մոտ թափորին միացան այստեղ հավաքված տարբեր տարիքի հավատացյալները՝ Տեր Սամվել քահանա Թորոսյանի գլխավորությամբ: